Աշնանն արտը նախ ցանում, ապա վարում էին և չէին ցաքանում՝ սերմը ծածկում էին թոխարյավ: Գարնանացանը կատարվում էր արտը վարելուց հետո և անպատճառ արտը ցաքանվում էր:

Որպես տափան գործ էր ածվում ցաքանը՝ երկճեղ հաստ ճյուղ, որի վրա հյուսվում էին կաղնու ավելի բարակ ճյուղեր, այնպես, որ նրանց երկայնծայրերը մնան մի կողմից դուրս և թրև գան արտի վրայով երկար ավելի պես: Ցաքանի տակ ամրացնում էին նույն երկարությունն ունեցող տախտակ մոտ 25—30 սմ լայնությամբ, որի երկու ծայրերից հավասար հեռավորությամբ շինված ծակերի մեջ նստեցնում էին մի-մի երկար ձող: Այս ձողերը հակառակ ծայրերով իրար հետ միացնելով՝ կապում էին լծին: Ցաքանի ճյուղերի վրա դնում էին ծանր քարեր կամ երբեմն նստեցնում էին երեխաներին՝ ավելի սեղմ տափելու համար: Տախտակը ջարդում էր կոշտերը: Ճյուղերը վարած գետինն ավլելով՝ ծածկում էին սերմերը:

Թե՛ վէսկիի և թե՛ ցաքանի լուծը նույնն էր, բոլորովին նման այլ գավառների լուծին, միայն թե շատ ավելի կոպիտ շինված, մանավանդ արևմտյան գավառներում գործածվողների համեմատությամբ: Այստեղ էլ եզան գլուխն աջ և ձախ կողմից պահող ձողերը կոչվում են սամի, սրմավատ, իսկ նրանց ծայրերը կապող բրդե կապերը՝ սմբէտան: Այստեղ էլ լուծը կամ գոնե նրա սամիները շինվում են պոչնի՝ բոշնի փայտից, ոչ թե նրա համար, որ այդ փայտն ավելի լավ է ծռվում, այլ կարծում են, թե բոշնին պահում է չար աչքից:

Գարնան սկզբից մինչև հնձի և խոտհարքի վերջանալը գյուղերում վարձում էին պահապաններ, որոնց պարտականությունն էր հսկել, որ տավարը արտը կամ խոտհարքի դաշտը չմտնի: Վարձը տալիս էին սովորաբար ցորենով կամ գարիով:

Հաջող բերք ունենալու և ցանքսն ամեն չարից ազատ պահելու համար թե՛ աշնանացանի և թե՛ գարնանացանի ժամանակ վարից առաջ սովորաբար հասարակ մատաղ էր մորթվում: Նույնը կրկնվում էր, երբ հարուստ բերք էր սպասվում, որ ոչ ոք աչքով չտա, կարկուտը չծեծի, կայծակը չխփի: Աշխատում էին վարը միաժամանակ սկսել, այն էլ բարի օրերին— երեքշաբթի, հինգշաբթի կամ շաբաթ օրերը[11]: Գիշերը չէին վարում, չէին ցանում, ինչպես և չէին հնձում գիշերվա վախից: Առաջին անգամ վէսկին վարը դուրս գալուց հետո վերադառնալիս հօտաղը հօտաղի վրա, մշակը մշակի վրա ջուր էր ածում, որ տարին անձրևային լինի[12]:

Ցանքը սկսելուց առաջ սերմացուից մի քիչ եփում էին՝ կրճախաշ անում, մեջը ձգելով կորեկ, լոբի, խամբար՝ եգիպտացորեն, առանց յուղի և բոլոր տանեցիք ուտում էին, որ տարին անձրևային լինի և ցորենի հատիկները խոշորանան, ինչպես խոշորանում են եփած ժամանակ, հասնեն եփած լոբու, կորեկի չափին[13]:

Ընդհակառակը՝ արգելվում էր սերմացուի մի որևէ հատիկ բովել կրակի վրա, ինչպես և չհասած հասկերը, որպեսզի արևը չխանձի ապագա բերքը և ցորենը չդարանա:

---

11 Բեխ գյուղում:

12 Գետաթաղ:

13 Ողջի (Օխչի):